




# ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՆԱԲԱԾ 23 ՓԵՏՐՎ. 1907. ԱԼԵԲՍԱՆԴՐԻԱ

## ԵԳԻՊՏՈՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ



Կ. Պոլսոյ Բիզանդիոն օրաթերթի փետր. 1-14  
թիւին մէջ հետեւեալ շահեկան լուրը կը կարդանք:

«Տարւոյն այս եղանակն Աղեքսանդրիոյ եկեղեցական և վարչական վէճերու շրջանն է, երէկուան Խառն Ժողովոյ մէջ այս մասին գրուած նամակներ կային, որոցմով բաւական զբաղեցաւ Ժողովը: Աղեքսանդրիոյ մէջ խումբ մը անձեր չեն ուզեր Բարթող փաշայի ատենապետութեան ներքեւ գտնուած Թաղ. Խորհուրդը: Բարթող փաշա ալ ասոնք չուզեր բնաւ և կը հրաժարի պաշտօնէն: Իսկ Խառն Ժողո որմը այս չուզողներու գիտումը կշռած է, կը փափաքի որ Բարթող փաշա շարունակէ իր պաշտօնը: Ասկէ առաջ խնդրոյն քննութիւնը յանձնուած էր Պօղոս փաշայի, որ իր պաշտօնը չկատարած Եւրոպա ուղեւորեցաւ, ու այս անգամ Եգիպտոս վերադառնալուն՝ չուզեր ստանձնել այդ պաշտօնը, որով-

հէտե ինքն ալ համամիտ է Պօղոսյ Խառն ժողովին և Բարթող փաշայի Թաղ. Խորհրդոյ առե-նապետ մնալուն կողմն է, բայց ընդգիծութեան չհանդիպելու համար կ'ուզէ չէզոք մնալ: Այսու հանգերձ գործը վերջնական լուծման մը կարօտ ըլլալով, Խառն ժողովն որոշեց երէկ անպատ-ճառ այս մասին լսել Պօղոս փաշայի կարծիքն և այդ մասին վրայ պէտք եղած որոշումը տալ:

Բիւզանդիոնի հաղորդած այս տեղեկութիւնները, թէև քիչ մը ճապաղ, սակայն կը հաստատեն սա իրողութիւնը թէ Ալեքսանդրիոյ ազգային խնդրի կարգա-դրման մասին համաձայնութիւն մը աիրէ Վսեմ. Պօղոս փաշայի և Վսեմ. Բարթող փաշայի միջև, ինչ որ բարեգուշակ բան մըն է:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Օհանեան ընտանիքը հրապարակաւ իր խո-րին շնորհակալութիւնները կը յայտնէ բոլոր այն հեռաւոր և մերձաւոր ազնիւ բարեկամաց որոնք գրաւոր կամ բերանացի կերպով իրենց ցաւակ-ցութիւնը յայտնած են վաղամեռիկ Անահիտ Օ-հանեանի մահուան առթիւ:

ՆՈՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ, ՍԸ

Պարիարքարանէն Վսեմ Արրահամ փաշա Բարթողի  
 ազգուած գիմում մը, ն'արազրելէ յետոյ Փոքր Ասիոյ  
 հայաբնակ գաւառներու մէջ այս տարի տիրած դաւ-  
 նաչունչ ձմեռը ու խ ս ր շ ա կ ի , կ ա ր կ ու տ ի և մ ա-  
 ր ա ի ի ն մ ա ն ը ն ա յ ա ն ս ա տ ու հ ա ս ն եր ր , կ ր խ ն յ ր է ն օր ի ն  
 Վսեմութենէն որ հաճի իր նախագահութեան տակ  
 հանգանակութիւն մը բանալ այստեղի կարող ազգա-  
 յիններէ պաաշած եղանակաւ նպաստ հասցնելու հա-  
 մար կարօտեալներուն: Պարիարքական սոյն գիմու-  
 մին ոյժ տուած են նա՛ն ըւրանայի կերպով, տեղւոյս  
 գաւառայի ազգայիններէն սմանք և նորին վսեմութիւնը  
 ինչպէս միշտ, այս անգամ ալ իր ձեռնտուութիւնը չէ  
 զլացած:

Հանգանակելի գումարը պիտի զրկուի պատրիար-  
 քարանի նպաստից սնտուկին որուն անգամներն են  
 Տ. Գառնիկ կիւլպէնկեան, Տ. Եղուարդ Փարակէօղեան,  
 Տ. Երսւանդ Էսայեան, Տ. Սիմօն Գայսերլեան և Տ. Տի-  
 րան կիւմիւշկերտան:

Նպաստից սնտուկը այդ նպաստը պիտի յղէ կա-  
 րօտեալներուն Առաջնորդներու միջոցաւ:

Վստահ ենք որ Ալեքսանդրիոյ պատուարժան ազ-  
 գայինները այս անգամ ևս ցոյց պիտի տան Մայր - Հայ-  
 բնիքի և առաւել բազմատանջ եղբայրներու մասին ի-  
 բնեց հոգածութիւն և պիտի փութան մասնակցիլ հան-  
 գանակութեան մը որուն արդիւնքէն կախեալ է հա-  
 զարաւոր թշուառ հայրենակիցներու կեանքը:



## ԵԶԵԱՆՑԻ ԿՏՈՒԿԸ

Կ. Պոլսոյ Բիւզանդիոն թերթին մէջ հետևալը կը կարդանք.

«Ա. Էջմիածնէն գրուած է Պատրիարքարան որ ուսուսական կառավարութեան զեկուցման համեմատ, հանգուցեալ Պ. Կարապետ Եզեանց 200 ուսուսական արժեթուղթ կտակած է Սանատարեան վարժարանին, պայմանաւ որ եղբայրը ցմահ տոկոսն ստանայ: Այս արժեթուղթերու տեսակին և արժողութեան մասին ո և է ծանօթութիւն չէ տրուած, բայց ինչպէս կ'երևայ, բաւական կարեւոր գումար մը պէտք է ներկայացընէ:»




### ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ ԳԱՀՐԻՒՆ

Պատահական թղթա ից մը Գահիրէէն կը գրէ մեզի: Գահիրէ ամեն ազգէ ստուար գազութ կը ունենալուն պատճառով բարեկենդանի խրրախճանութիւնները քիչ մը կանուխէն կսկսին հօս: Դիմակաւորները սովորաբար կը համախմբուին « Է զ պ է ք ի յ է » ի հանրային պարտէզին մէջ: Ոչ մէկ գրի չ պիտի կրնար նըկարագրել այն խաղքութիւնները որոնք տեղի կուենան հոն այս առթիւ: Բայց ինչ որ ամենէն աւելի տխուր է այն է որ, մանաւանդ այս վերջին տարիներու մէջ, կարգ մը երիտասարդներ եւ օրիորդներ, ոչ թէ դիմակով այլ ազամային երեսով, կը պտուաքին պարտէզին մէջ ու մասխարկութիւններ կընեն: Այսպէս է որ անցած կիրակի զժքախտաբար պատէհութիւնը ունեցայ նոյն պարտեզին մէջ հանդիպելու քանի մը հայ օրիորդներու (զիւրաւ կըմըռնէք այն պատ-

ճառները որոնք զիս կը պարտաւորէն լուծեամբ անց-  
նելու անուններուն վրայէն, բայց հաստատապէս որո-  
շած եմ այդ անունները հանրութեան հաղորդել կի՞ն  
կա չքաշուին ) պտոյտներ կընէին տեսակ տեսակ ան-  
պարկեշտ ակնարկութիւններ ընելով երիտասարդ ան-  
չորդներուն, և տեղի առին որ թեթևադիպ պարոննե-  
րու փոքրիկ ջոկատը զիրենք քիչ մը աւելի մօտէն  
չըջապատէ, ո՛հ ի՛նչ շնորհալի են այս օրիօրդները . . .  
և մանաւանդ որքան պջրուն . . . : Արդ կը հարցնեմ  
ո՞վ է իր ցեղին պատուոյն նախանձախնդիր հայը որ  
պիտի հանդուրժէր այս բմբոստացուցիչ տեսարանին :

Ուստի ինձի կը թոյլատրեմ ուշադրութիւնը հրա-  
ւերել ծնողքներուն, որպէսզի զգոյշանան իրենց ազ-  
ջիկ զաւակները մինակ դուրս հանելէ ոչ միայն այս-  
պիսի հանգէաներու օրեր այլ նոյնիսկ պարզ օրեր :

Գ. Տ.



### ՍՄԷՆ ԲԱՆ ՊԱՏՐԱՍ Է ՅԻՄԱՐԱՆՈՅ ԵԿԷՔ

Ի՛նչ պիտի խորհէիք այն մարդուն վրայ որ ճամ-  
բան զացած ատեննիդ ձեզի կեցունէր և սա տեսակ  
հարցում մը ուզէր :

- Դուք ապակեղէն ծովուն վրայ կենալ կ'ուզէ՞ք :  
Եւ եթէ այս տարօրինակ հարցումէն շուրած՝ ու-  
զէիք իմանալ իր նպատակը, ամենայն պազարիւնու-  
թեամբ պատասխանէր ձեզի :

- Իմ նպատակս է փրկութեան ծրագրին չորրորդ  
թշնամին մատնանիչ ընել և իմաստուն կոյսերուն առ-  
նելիք իւզը իսկապէս ծանօթացնել քեզի :

Ապահովաբար այդ հարցումն ընող ու այդ պատաս-

խանը տուող մարդը խենթ մը պիտի նկատէիք ու պիտի փութայիք կարելի եղածին շտի շուտ քովէն փախչիլ, վախնալով որ վզերնիդ կը փաթթուի:

Արդ, այս օրերս ձեռքս անցաւ Ալեքսանդրիոյ մէջ նոր տպուած կապոյտ կողքով գիրք մը որ այդ հարցումն ու պատասխանը պարունակելէ զատ, տակաւին ատկէ շատ աւելի խենթութեւս բաներ կը պարունակէր:

Նախ՝ կողքին վրայ ու եւ է խորագիր չի կայ, այլ պատկեր մը: Այս պատկերը կը ներկայացնէ ճերմակներ հագած աղջիկ մը, կոնակին վրայ հնդկահաւի երկու փետուր փակցուցած, ձախ ձեռքով տետրակ (1) մը բռնած, իսկ աջ ձեռքը տաճկական մզկիթներու ճէմիշներուն մէջ գործածուած երպրբիս մը: Այդ երպրբիսով ճերմակներ հագած աղջիկը կասկածելի բան մը կը լեցընէ սգաւոր եւ կարճահասակ աղջական մը թեին մէջ գտնուած արարական կիւլլէի մը մէջ: Ճերմակ աղջրկան անունն է Յայտ. ժը. 1-5, իսկ սգաւորը կը կոչուի՝ Մատթ. իե. 4: Այսչափը կարծենք բաւական է Ապպասիէի յիմարանոցը ազատ մուտք ունենալու համար, բայց անցնինք ու դարձնենք կողքը:

Կողքը դարձնելուս պէս առաջին անգամ աչքիս կը զարնէ Անզգիացիի մը անունը՝ Ֆրէտէրիք Սիճէսսըն:

- Ի՞նչ գործ ունի այդ լուրջ մարդը (քանի որ Անզգիացի է, եթէ ո՛չ Ամերիկացի) այստեղ պիտի հարցընէք:

Հարկ է ըսել որ գրքին բուն իսկ հեղինակն է:

---

(1) Գոյցէ Ազատ Պօսքի չվճարող բաժանորդներ անուանց ցանկը:



Քիչ մը վար սա կոչը կը կարգանք «Ամեն բան պատրաստ է հարսնիք եկէ՛ք», ու յետոյ գրքին խորագիրը՝ ԳՍՌՆՈՒԿԻՆ ՀԱՐՍԱՆԵԱՅ ՀՐԱԻԷՐԸ: Խորագիրէն յետոյ նոր ուղեբձ մը կ'ուզուի ընթերցողներուն «Ուստի գացէ՛ք ճամբու գլուխները և ո՛վ որ գանկուուրլաք հարսնիքի հրաւիրեցէ՛ք:» Վերջապէս կ'երևայ թարգմանիչը, ազատ ոճով, ընդլայնումներով ու կարևոր յաւելումներով նոյն ինքն Կ. Գ. Ուզունեան:

«Աղնիւ ընթերցող, կըսէ թարգմանիչը յաջորդ երեսին մէջ, այս գրքոյկը հրատարակելով նպատակ ունինք երրորդ հրեշտակի պատգամին հետ Աստուծոյ ժողովուրդին մէջ ներմուծուած խեղաթիւրումներն ու մոլորութիւնները երևան հանել, փրկութեան ծրագրին շորթորդ թշնամին մասնանիչ ընել, և իմաստուն կոյսերուն առնելիք իւզը իսկապէս ծանօթացընել քեզի:»

Ու այդ կարգի ուրիշ բանգուշանքներ ընելէ յետոյ մեզ ճամբու կը գնէ ըսելով «Տէրը հետերնիդ ըլլայ:» (Շար.)



ՓԱՍՏԱԲԱՆ

Մ . Թ Է Ո Բ Ի Լ Ե Ա Ն



Կը ստանձնէ ամէն տեսակ դատեր, Խառն Դատարաններու առջև. նմանապէս կը լամբագրէ ամէն պայմանագրութիւններ եւ այլ դատական պաշտօնագրեր:

Գրասենեակը կը գտնուի Մէնչիէի հրապարակին վրայ, Մօնֆէրաթօյի շէնքին մէջ:



“ԱՋԱՏ ԽՕՄԲ”-ի Գալանտիքը

- ԱՋԱՏ ԽՕՄԲ - 40 ՇՐՏԱՐԱԿՈՒԻ ԶԱՐԱԾ ՕՐԵՐԸ

Նգիպոսի համար բաժնեկիճն է

40 ՔԻԻԸ                      40 Ղ.ԲԸ    ՈՂ.Զ

20    ”                              20    ”       ”

Ա Ր Ց Ա Ս Ա Ն Մ Ա Ն

ԵՐՐՈՒԱ    40    ՔԻԻ                      10    ՏՐԱՄԲ

ՌՌՈՒԻ    ”    ”                              4    ՌՌՈՒԻ

ԱՍԵՐԻԿԱ    ”    ”                              2    ՏՈՒՐ

Բաժանորդագրուելու նր կանխիկ

ՀԱՏԸ    1    Ղ.ԲԸ    ՈՂ.Զ

“ԱՋԱՏ ԽՕՄԲ”-ի համար բաժնեկիճին կամ որ և է գրուելին պետք է ապրիլ 25-տե երկր հասցեին՝

**Կ. Nazarethian**

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Մանուցումներ կընդունուի խանութի պայմաններով:

Գառառիմառու... Խորագիր **Ե. ՕՏԷՍԷ**

Տպր. Փարզ Դ. ՆԱԶԱՐԵԹԻԱՆԻ ԱԷԼԵԿՏՐՈՒԿԱԿԱՆ